

ներ խաղաղութեամբ ընդ շուրսն. որ և տեղին՝ ամենայն զնդին լինէր ճանապարհ անցից անհողութեամբ »: Ահա այն մեծ նշանը զոր զովեստով յիջէ հեղինակն, որ նա անվճար և անբարկիւղ կ'իջնէ գեղը, և պղտորեալ ալիքները հեղեղելով կ'անցնի միւս կողմը, իբրև ծաղկածի-ծաղ դաշտի մը միջէն՝ ամենայն խաղաղութեամբ և առանց վտանգի ենթարկուած: Բնական է որ այսքան օրինակ՝ զբնութագլային ազգացութիւն մ'ունեցած լինելու է բոլոր զնդի վերայ, որք սիրտ առած՝ իրարու ետև և նոյն ճանապարհով՝ կ'անցնին ամիգոտութեամբ »: — Այսուհետև կը սկսու մեր ուղղադրութեան հաւաստիքը: « Եւ այս լինէր նշան մեծ յայտնի »: Գե՛ծ՝ ոչ այն բանի համար որ քաջն Աւաճան անցեր էր խաղաղութեամբ, և նորա ետեւից անցեր էին նոյնպէս « առոյշը քաջամիտ՝ յայրուստի՝ ամիգոտութեամբ. այլ մեծ և յայտնի նշան յայնձն հոգե՛ս որ Աւաճան ամենէ պղտոր աւանց միջէն կտրեց անցա խաղաղութեամբ « որրպէս ընդ յոյժ տեղի ծանծանղ »: այնպէս որ տեսողաց թուէր՝ « որ և անոյժ կանաթի արանց լինէր անցանել զիրիւս ըստ կայմի », Բող թէ ամենայն այրեւծիղոյմ: Եւ ահա յայդմ է հրաշքի զագտնիքն և մեր ուղղադրութեան շարժառիթն, որ յուսամ ոչ բռնաբարտեալ է և ոչ հակասական:

*

Քաղմ. Անդ. էջ 205. « Խօսակեր » . . . « Լաւք » Փարզ. էջ 10:

Այս երկու բառերն աստղաճիղի եմ տպագրութեան մէջ, որովհետև ուղղապրական մեք կտակածելի է եղեր, Եւ ուղղոր էի « Խօսակեր »-ը՝ լուսակեր, իսկ « հաւք » բառի համար բացատրութեան տուեր էի որ տարակուսակամ չէ, վասն զի ժողովրդեան բերանը՝ հաւքը նշանակում է թանձրամարմին և զիշակեր մեծ թեւաւորեալը: Ծանաւանց որ հաստանունը մեծից թուլունները, « Լաւք », զանազանելու համար զիշակերներեց՝ վերջիններս կոչում են Գիւղհաւք-գալաւհաւք: — Առտի խնդրիմ սրբաբերել անտեղի « Լաւք » բառը:

Հ. Գ. Ն.

ՍՐԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Մեծ. Տ. Նորայր՝ Միտայէի է Ք. Մ. Մաշն » ճառքն (Հմտ. Քաղմ. 1906. Թ. 4, էջ 161) հրատարակուած պատարիկին հետեւեալ սրբագրութիւնը կ'ընէ:

Միտայէի . . . վկայ է օտարորտի ոմն յաջողու, զհալուս լոյզելով՝ որ յարեւելեան կողմանէ: զոր առջ թէ յաջ կողմ գնացեսի ու տիւ արեղականն, և թէ յաճեակ՝ յերկու կոյս ու իրթիմն . . .

Այս խօսքերը անուղղակի ամուսնած են Հոմերոսի Իլիականէն (Գրեք ժԲ): Միտայէի իր առջև ունեցած է Փիլոնի Իլիականի վերջը (Հմտ. Տպ. Վնեմակի, 1826, էջ 5. մասն Ի.) և հետեւեալ տողերէն թաղուած. Թիլոմ . . . վկայ է և քերթողն. այժոյ հալուս կոչելով գայնս, որ յարեւելից կողմանէն. և մասն յողմանն գայնս՝ որ յարեւմտից կողմանէն. յորժամ առջ զի թէ յաջ կողմն գնացեսի ու տիւ և յարեղակնդ. իսկ թէ յաճեակ՝ յերկու կոյս ու իրթիմն »:

Միտայէի նոյն պատարիկին « իրթմանս »-ը « իրթման » պէտք է ընթանուլ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԾՆՏՈՒԹԻՒՆ

1. Բամակուիւր հրապարակիմ վրայ (եւստայմ, հայկական մօթայ, օրկամ). — 2. Նախմտաց երգեցողութիւմը. — 3. Խաղերը և խաղերու մագուրմ:

1. — Գրեթէ տարի մ'եղաւ որ տաճականայ մամուլը կը զբաղի եկեղեցական երաժշտութեան խնդրով, այնպէս որ արտասահմանի մամուլն ալ կը սկսի արձագանգել: Մտածուեցաւ անցեալ տարի հայկական եօրս կոչուածը անհետացնել և եւրոպականը ընդհանրացնել զպրոցներու և եկեղեցիներու մէջ. (և այս լաւ գաղափարը յայտնած էր Ամեն. Օրմանեան պատրիարքը): Այս առթիւ տեսնուեցան թիրուղէմ յօդուածներ՝ գրուած կիրացուելէ, տէրտէրներէ, որոնց մէջ Լայլն և այնպիսիներ՝ որոնք եւրոպական եօրային անանց գաղափարն ունենալու՝ կրօնգոյրութեան ֆոնէկուցման ղէմ (այսպիսի խորագրով!) բողոքեցին ղէպ ի պատրիարքարան: Եւ այդ խնդիրը երբ մարեցաւ՝ հոռուայն պատարագը մէջտեղ ելաւ. և օրագիրները նոյն իսկ հակեկները՝ չյոգնեցան երեք շորս հոռուայն պատարագները միեւնոյն օրը նկարագրելէ: Այս առթիւ մտածուեցաւ Օրկան կամ երաժշտական գործիք մտցնել եկեղեցին. և այս մտածութեան ամենայն ետանդամը դիմադրեցին այն ամէնքը՝ որոնք կը դաւանէին թէ Հայկական եկեղեցին հայկական մնալու համար՝ պէտք չէ նորութիւններ ներմուծել: Ըսել է՝ որ եթէ այդ նախանձախնդիրները Ս. Լուսաւորչայ դարէն միշտ եկեղեցւոյ պահապան մնային՝ այսօր չոր պատերով և երկու պատուհաններով եկեղեցի մը պիտի մնար մեզի, ուր Մաղմանները պիտի ճաղէինը: Ետանայնի բանականութիւնը դեռ հրապարակին վրայ է. հոն են վարդապետներ, տիրացուներ և զաւեշտագրեր (— շատերը իրենց բարեպաշտ համոզումով). և ահա հոն վարդապետ մը գաղափարակից է զաւեշտագրին, տիրա-